Հավելված N 17
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի
29-ի N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժինը (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ նախարար) և նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը:

4. Բաժնի ներքին կառուցվածքը հաստատում և փոփոխում է նախարարը:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) զորահավաքային նախապատրաստության և զորահավքի, քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը.

2) նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում համապատասխան պետական քաղաքականության իրականացումը.

3) բաժնի իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.

4) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում նախարարությանը Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված միջոցառումների իրականացումն ու համապատասխան այլ աշխատանքների կատարումը:

III. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժինը՝

1) իրականացնում է կազմակերպչական համալիր միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներով նախարարության աշխատողների պաշտպանությունն ու նախարարության համակարգի կայուն գործունեությունն ապահովելու նպատակով.

2) սահմանված դեպքերում և կարգով ստեղծում է նախարարության քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, կազմավորումներ և ապահովում է նախարարության զորահավաքային նախապատրաստության ու արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը, նախապատրաստումը, մշակումը և անհրաժեշտության դեպքում՝ դրանց իրականացումը.

3) կազմակերպում է նախարարության զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության ծրագրերի և պլանների մշակումը, աշխատանքների տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական ապահովումը.

4) ապահովում է նախարարության զորահավաքային նախապատրաստության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության պլանների կատարման, ուսումնական վարժանքների անցկացման, ուսումնավարժական հավաքների և պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը.

5) ապահովում է միջոցառումների կատարման վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների կազմումը և ներկայացումը՝ բնագավառի պետական լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

6) իրականացնում է նախարարության պաշտոնատար անձանց և նախարարության աշխատակազմի աշխատողների զինվորական հաշվառումը և հատուկ զինվորական հաշվառման ենթակա աշխատող պահեստազորայինների սահմանված կարգով ամրագրման հետ կապված աշխատանքներ,

7) համակարգում է նախարարության քաղաքացիական պաշտպանության շտաբի, զորահավաքային մարմնի, արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության «Առևտրի և սննդի» ու «Նյութատեխնիկական մատակարարման» հանրապետական ծառայությունների աշխատանքները խաղաղ և ռազմական դրության ժամանակ համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

8) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում նախարարությանը և բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում մասնակցում է տարահանված բնակչությանը և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների անձնակազմին սննդամթերքով, հագուստով կոշկեղենով և այլ առաջին անհրաժեշտության

ապրանքներով, նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներով ապահովման աշխատանքներին՝ համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով զորահավաք հայտարարելու դեպքում կազմակերպում և համակարգում է նախարարության աշխատանքների անընդհատ կազմակերպման և շարունակական գործունեության իրականացման աշխատանքները՝ ռազմական դրության բնագավառի իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան:

10) ապահովում է նախարարության մասնակցությունը ռազմական դրության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական լիազորված մարմիններ ճանաչված և այդ բնագավառներում տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին, շտաբային վարժանքներին, խորհրդակցություններին և սեմինարներին.

11) կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման աշխատանքները.

12) իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության և հանրապետական գործադիր մարմինների կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության վարչապետի ու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, ուսումնասիրությունը, քննարկումը և մասնագիտական եզրակացությունների ներկայացումը.

13) ապահովում է քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և դրանց ներկայացումը.

14) իրականացնում է բաժնի գաղտնի գործավարությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

15) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, զորահավաքային նախապատրաստության միջոցառումներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական համակարգի մարմիններին վերապահված գործառույթների շրջանակներում բաժնի աշխատողներն ընդգրկվում են միջգերատեսչական և աշխատանքային այլ խմբերում ու հանձնաժողովներում.

16) մասնագիտական գիտելիքների և աշխատանքային կարողությունները և ունակությունները կատարելագործելու նպատակով, բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում, բաժնի աշխատողները մասնակցում են միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված և կազմակերպված միջոցառումներին.

17) իրականացնում է նախարարության կանոնադրությամբ բաժնին վերապահված այլ գործառույթներ, ապահովում է նախարարի, ոլորտը համակարգող նախարարի տեղակալի և նախարարության գլխավոր քարտուղարի հանձնարարականների կատարումը.

18) իրականացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, ռազմական դրության իրավական ռեժիմի ու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

10. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը:

11. Բաժնի պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է նախարարի, նախարարության գլխավոր քարտուղարի կողմից իրենց լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները,

3) հաշվետու է նախարարին և անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին:

12. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը՝ Բաժնի պետի ներկայացմամբ:

13. Բաժնի կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Բաժնի պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:»